ՆՈՐՔ
ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

nork.am

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻՑ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՐԹԱԿ

«Շահառու» օգտվողի

ուղեցույց – ձեռնարկ

Առաջին բաղադրիչ

2025

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ընտանիքների բնակարանային ապահովման պետական աջակցության ծրագրի դիմումների հաշվառման հարթակը նախատեսված է աջակցության միջոցառման շահառու դառնալու նպատակով թվային միջավայրում դիմումի ներկայացման, անհրաժեշտ տվյալների հավաքագրման, շահառու լինելու որոշման կայացման, հավաստագրի և ներկայացված հայտերի վերաբերյալ վիճակագրության գեներացման համար:

Հարթակի շահառուներն են Ադրբեջանի կողմից 2020թ. սեպտեմբերի 27-ին սանձազերծված պատերազմից, ինչպես նաև 2023թ. սեպտեմբերի 19-ից հետո Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված և Հայաստանի Հանրապետությունում փաստացի բնակվող ընտանիքները:

Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ընտանիքների բնակարանային ապահովման պետական աջակցության ծրագիրը բաղկացած է երեք բաղադրիչներից՝ *(Տես՝ Նկար 1.)*

1. Բնակարանի կամ կառուցվող շենքից բնակարան գնելու իրավունքի կամ անհատական բնակելի տան ձեռքբերում,
2. Անհատական բնակելի տան կառուցում,
3. Գործող հիփոթեքային վարկի մարման աջակցություն:

Նկար 1.1



Նկար 1.2

Բաղադրիչ 1. Բնակարանի կամ կառուցվող շենքից բնակարան գնելու իրավունքի կամ անհատական բնակելի տան ձեռքբերում

ԼՂ-ից բռնի տեղահանված ընտանիքների բնակարանային ապահովման պետական աջակցության ծրագրի դիմումների հարթակում ընտրելով աջակցության **«Բնակարանի կամ կառուցվող շենքից բնակարան գնելու իրավունքի կամ անհատական բնակելի տան ձեռքբերում»** տեսակը, բացվում է **«Ուշադրություն»** գրառմամբ հաղորդագրության պատուհան: *(Տես՝ Նկար 2, 3.)*



Նկար 2.



Նկար 3.

Հաղորդագրության **«Դիմել»** հրահանգն ակտիվացնելիս բացված էջում ցուցադրվում են թիրախային խմբերը՝ ընտրելու հնարավորությամբ *(Տես՝ Նկար 4.)*

- 3 և ավելի անչափահաս երեխա ունեցող ընտանիք,
- Զոհվածի, կերակրողին կորցրածի կամ ֆունկցիոնալության ծանր կամ խորը աստիճանի սահմանափակում ունեցող անդամով, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող երեխա ունեցող ընտանիք,
- Ցանկացած այլ կազմով ընտանիք:

Պատուհանի ձախ հատվածում ցուցադրվում են հիմնական բաժինները՝ *(Տես՝ Նկար 4.)*

- Ծրագրի ընտրություն,
- Անձնական տվյալներ,
- Դիմումի հաստատում:

Էջի ստորին հատվածում առկա «**Սլաք**» պատկերագրի միջոցով հնարավոր է ցուցադրել կամ թաքցնել բաժինները:



Նկար 4.

«Ծրագրի ընտրություն» բաժնից թիրախային խմբի տեսակը ընտրելուց և **«Հաջորդ»** հրահանգն ակտիվացնելուց հետո ցուցադրվում է **«Ուշադրություն»** գրառմամբ հաղորդագրության պատուհան: *(Տես՝ Նկար 5, 6.)*



Նկար 5.



Նկար 6.

ՀՀ քաղաքացիություն չունենալու դեպքում ծրագրի շահառու դառնալու մասին տեղեկատվություն ստանալու համար ակտիվացվում է **«Սեղմեք այստեղ»** հրահանգը: **«Ծանոթագրություն»** բաժնում տեղեկատվության բովանդակությանը ծանոթանալուց հետո **Գլխավոր էջ** վերադառնալու համար ակտիվացվում է պատկերագիրը: *(Տես՝ Նկար 7, 8.)*



Նկար 7.

Նկար 8.

Հաղորդագրության պատուհանի **«Տեղեկացված եմ»** հրահանգն ակտիվացնելիս անցում է կատարվում դիմումի լրացման հիմնական էջ, որտեղ առկա է հուշող տեքստով գրառում՝ **«*-ով նշված դաշտերում տվյալների մուտքագրումը պարտադիր է»** և **«Նույնականացման տվյալներն անհրաժեշտ է լրացնել անձը հաստատող փաստաթղթի տվյալներին համապատասխան»:** *(Տես՝ Նկար 9, 10.)*



Նկար 9.



Նկար 10.

«Անձնական տվյալներ» բաժնի **«Դիմումատուի տվյալներ»** ենթաբաժնում դիմումը լրացնելիս, երբ նշված ՀԾՀ-ով արդեն առկա է որևէ դիմում, որի կարգավիճակը մերժված չէ, ցուցադրվում է հաղորդագրություն՝ **«Տեղի է ունեցել սխալ, նշված տվյալներով դիմում առկա է համակարգում»** գրառմամբ: *(Տես՝ Նկար 11.)*



Նկար 11.

Եթե առաջին անգամ մուտքագրված դիմումը մերժվել է, ապա հնարավոր է նույն ՀԾՀ-ով կրկին դիմում ներկայացնել:

Անչափահաս անձի տվյալներով դիմում լրացնելիս ցուցադրվում է սխալի մասին հաղորդագրություն: *(Տես՝ Նկար 12.)*



Նկար 12.

Դիմումատուի կողմից ոչ հավաստի տվյալներ մուտքագրելիս ցուցադրվում է սխալի մասին հաղորդագրություն: *(Տես՝ Նկար 13.)*



Նկար 13.

ՔԿԱԳ ՏԾ-ից անձի մահվան վերաբերյալ տեղեկատվություն ստանալու դեպքում ցուցադրվում է սխալի մասին հաղորդագրություն: *(Տես՝ Նկար 14.)*



Նկար 14.

«Անձնական տվյալներ» բաժնի **«Դիմումատուի տվյալներ»** ենթաբաժնում անձի տվյալները՝ ՀԾՀ համարը/ՀԾՀ համար չունենալու մասին տեղեկանքի համարը, անունը, ազգանունը լրացնելուց հետո **«Նույնականացնել»** հրահանգի միջոցով լրացված տվյալները նույնականացվում են Բնակչության պետական ռեգիստրի (ԲՊՌ) տվյալների հետ, և էջի ստորին մասում հայտնվում է **«Անձը հաջողությամբ նույնականացվեց»** հաղորդագրությունը: **«Հեռացնել»** հրահանգով հնարավոր է հեռացնել անձի նույնականացման գործընթացը: *(Տես՝ Նկար 15.)*



Նկար 15.

Այնուհետև լրացվում են **«Հեռախոսահամար»** և **«էլ. փոստի հասցե»** դաշտերը: *(Տես՝ Նկար 16.)*



Նկար 16.

Հաջող նույնականացումից հետո ինքնաշխատ եղանակով լրացվում են նաև **«Անձը հաստատող փաստաթղթի տվյալներ»** և **«Հաշվառման հասցե»** դաշտերը: *(Տես՝ Նկար 17.)*



Նկար 17.

Եթե **Հաշվառման հասցեն** համընկնում է փաստացի բնակության հասցեին, ապա **«Այո»** տարբերակը ընտրելիս փաստացի բնակության հասցեի դաշտերը լրացվում են ինքնաշխատ, իսկ **«Ոչ»** տարբերակը ընտրելիս՝ տվյալները լրացվում են ձեռքով: *(Տես՝ Նկար 18.)*



Նկար 18.

«Ավելացնել ընտանիքի անդամ» հրահանգն ակտիվացնելիս բացվում են ընտանիքի անդամի տվյալները լրացնելու դաշտերը, **«Հեռացնել»** հրահանգով նշված դաշտերը հեռացվում են: *(Տես՝ Նկար 19, 20.)*



Նկար 19.



Նկար 20.

«Ընտանիքի անդամի տվյալներ» ենթաբաժնում անձի տվյալները՝ ՀԾՀ համարը/ՀԾՀ համար չունենալու մասին տեղեկանքի համարը, անունը, ազգանունը լրացվում են ձեռքով: **«Նույնականացնել»** հրահանգի միջոցով լրացված տվյալները ԲՊՌ-ի տվյալների հետ նույնականացվում են և էջի ստորին մասում հայտնվում է **«Անձը հաջողությամբ նույնականացվեց»** հաղորդագրությունը: **«Հեռացնել»** հրահանգով հնարավոր է հեռացնել անձի նույնականացման գործընթացը: *(Տես՝ Նկար 21.)*



Նկար 21.

Հաջող նույնականացումից հետո **«Ազգակցական կապ (դիմողի) նկատմամբ»** ընտրացանկից ընտրվում է համապատասխան տարբերակը: Որպես ընտանիքի անդամ **«անչափահաս երեխա»** կամ **«ամուսին/կին»** արժեքներն ընտրելիս՝ կապը ՔԿԱԳ-ի միջոցով չհայտնաբերելու պարագայում բացվում է **«Կցել փաստաթուղթ»** հրահանգը և, երեխաների դեպքում կցվում է ծննդյան վկայականը, իսկ ամուսինների դեպքում՝ ամուսնության վկայականը: *(Տես՝ Նկար 22.)* Այլ արժեքների դեպքում, օրինակ՝ քույր, եղբայր և այլն, փաստաթուղթ կցելու անհրաժեշտություն չի առաջանում: Կցվող փաստաթղթերը պետք է լինեն jpg/png/pdf ձևաչափով և չգերազանցեն 10 MB-ը:



Նկար 22.

Փաստացի բնակության հասցեն հաշվառման հասցեի հետ համընկնելու դեպքում տվյալները չեն ցուցադրվում, **«Ոչ»** տարբերակն ընտրելիս՝ համապատասխան դաշտերը լրացվում են ձեռքով: *(Տես՝ Նկար 23.)*



Նկար 23.

«Պահպանել» հրահանգն ակտիվացնելիս էջի վերին հատվածում հայտնվում է **«Ընտանիքի անդամի տվյալները պահվեցին»** հաղորդագրությունը: *(Տես՝ Նկար 24.)*



Նկար 24.

«Հավաստում եմ, որ լրացված տվյալները ճշգրիտ են» և **«Հավաստում եմ, որ ընտանիքի բոլոր անդամները տվել են իրենց համաձայնությունը դիմում-հայտարարության մեջ իրենց տվյալները ներառելու համար»** դաշտերի ընտրատուփերը նշելով և **«Հաստատել»** հրահանգն ակտիվացնելով, բացված պատուհանում ցուցադրվում են **«Վերդառանալ դիմումին»** և **«Համոզված եմ»** ընտրանքները:

«Վերդառանալ դիմումին» տարբերակն ընտրելիս հնարավոր է վերադառնալ և խմբագրել տվյալները: **«Համոզված եմ»** տարբերակն ընտրելիս բացվում է հաստատման հաղորդագրությամբ պատուհան, որտեղ նշված է նաև դիմումի հերթական համարը: *(Տես՝ Նկար 25, 26.)*



Նկար 25.



Նկար 26.

Առաջին բաղադրիչի դիմումի մյուս տեսակները՝ **«Զոհված, կերակրողին կորցրած կամ ֆունկցիոնալության ծանր կամ խորը աստիճանի սահմանափակում ունեցող անդամով, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող երեխա ունեցող ընտանիք»** և **«Ցանկացած այլ կազմով ընտանիք»** դիմումի տեսակները լրացվում են նույն սկզբունքով:

Քաղաքացիների կողմից ներկայացված դիմումներն ամրագրվում են **Հարթակի** տվյալների շտեմարանում, որտեղ համադրումներից և Միասնական սոցիալական ծառայության աշխատակիցների կողմից կցված փաստաթղթերի ստուգումներից հետո դիմումատուն էլեկտրոնային փոստի միջոցով ստանում է ծանուցում դիմումի ընթացքի՝ հաստատման կամ մերժման վերաբերյալ: Եթե դիմումը հաստատվել է, էլեկտրոնային փոստին ուղարկվող նամակին կցվում է նաև հավաստագիրը *(Տես՝ Նկար 27.)*, որը դիմումատուն կարող

է ներկայացնել համագործակցող բանկ կամ վարկային կազմակերպություն, որոնց ցանկը կարելի է տեսնել՝ անցնելով նամակում առկա հղումով:



Հավելված N 2
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի
2024 թվականի հուլիսի «02»-ի թիվ 103-Ա/1 հրամանի

«00» ամիս 0000 թ.

ՀԱՎԱՍՏԱԳԻՐ N 00000

Սույնով հավաստվում է, որ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒՆ-ը,

անձը հաստատող փաստաթուղթ՝ XX000000, հանդիսանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի մայիսի 16-ի N 710-Լ որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) հաստատված՝ «Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ընտանիքների բնակարանային ապահովման պետական աջակցության ծրագրի» շահառու:

Ընտանիքի անդամները՝ ——————————
——————————

Հավաստագիրը երաշխավորում է Հայաստանի Հանրապետությունում հիփոթեքային վարկի միջոցով բնակարանի կամ կառուցվող շենքից բնակարան գնելու իրավունքի կամ անհատական բնակելի տան ձեռքբերման դեպքում Որոշմամբ սահմանված աջակցության տրամադրում:

Սույն հավաստագրի գործողության ժամկետը 365 օրացուցային օր է՝ հաշված տրամադրման օրվանից:

Միասնական սոցիալական ծառայություն
ՀՀ, ք. Երևան Նալբանդյան 13 info@socservice.am

Նկար 27.

Յուրաքանչյուր բաղադրիչով դիմում ներկայացնելիս, Շահառուն ստանում է ծանուցում էլ. փոստին՝ համապատասխան բովանդակությամբ: Օրինակ՝ 1-ին բաղադրիչով ներկայացված և հաստատված դիմումի դեպքում ծանուցման տեքստը հետևյալն է՝

«Հարգելի (անուն, ազգանուն)
Տեղեկացնում ենք, որ Ձեր ընտանիքը հանդիսանում է Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ընտանիքների բնակարանային ապահովման պետական աջակցության ծրագրի շահառու:
Եթե արդեն ընտրել եք Ձեր ապագա բնակարանը (բնակելի տունը), կից հավաստագրով կարող եք ներկայանալ համագործակցող բանկ կամ վարկային կազմակերպություն (կազմակերպությունների ցանկը՝ այս հղումով՝ https://www.mlsa.am/banks):
Հարգանքով՝ Միասնական սոցիալական ծառայություն»:

Դիմումի մերժման դեպքում շահառուն էլեկտրոնային փոստին ստանում է ծանուցում, որտեղ նշված է մերժման պատճառը:

Ընտանիքի անդամի մահվան դեպքում առաջանում է հավաստագրի խմբագրման անհրաժեշտություն: Շահառուն դիմում է Միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոն՝ ներկայացնելով մահվան վկայականը: ՄՍԾ աշխատակցի կողմից կատարվող խմբագրումների արդյունքում հավաստագրից հեռացվում են մահացած անձի տվյալները, ձևավորվում է նոր հավաստագիր, որը ուղարկվում է շահառուի էլեկտրոնային փոստին:

Դիմումատուն Միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոն կարող է ներկայացնել նաև դիմում՝ հավաստագրի չեղարկման նպատակով: Չեղարկման արդյունքում հավաստագիրը դառնում է անվավեր: Հավաստագրի չեղարկման մասին դիմումատուի էլեկտրոնային փոստին ուղարկվում է ծանուցում: Եթե հավաստագիրն իրացված է, չեղարկել կամ խմբագրել հնարավոր չէ: *(Տես՝ Նկար 28.)*



Հավելված N 2
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի
2024 թվականի հուլիսի «02»-ի թիվ 103-Ա/1 հրամանի

«00» ամիս 0000 թ.

ՀԱՎԱՍՏԱԳԻՐ N 00000

Սույնով հավաստվում է, որ ԱՆՈՒՆ ՀԱՅՐԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒՆ-ը,

անձը հաստատող փաստաթուղթ՝ XX000000, հանդիսանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի մայիսի 16-ի N 710-Լ որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) հաստատված՝ «Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ընտանիքների բնակարանային ապահովման պետական աջակցության ծրագրի» շահառու:

Ընտանիքի անդամները՝ _____
_____

Հավաստագիրը երաշխավորում է Հայաստանի Հանրապետությունում հիփոթեքային վարկի միջոցով բնակարանի կամ կառուցվող շենքից բնակարան գնելու իրավունքի կամ անհատական բնակելի տան ձեռքբերման դեպքում Որոշմամբ սահմանված աջակցության տրամադրում:

Սույն հավաստագրի գործողության ժամկետը 365 օրացուցային օր է՝ հաշված տրամադրման օրվանից:

Միասնական սոցիալական ծառայություն
ՀՀ, ք. Երևան Նալբանդյան 13 info@socservice.am

Նկար 28.

Կայացված որոշումների վերաբերյալ անհամաձայնությունների դեպքում կարելի է զանգահարել Թեժ գիծ՝ 114 հեռախոսահամարով կամ դիմել Միասնական սոցիալական ծառայության տարածքային կենտրոն կամ ուղարկել նամակ՝ e-request.am էլեկտրոնային հարցումների միասնական հարթակի միջոցով: Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանվածների համար իրականացվող պետական աջակցության ծրագրերին կարելի է ծանոթանալ bnakavayr.am, irazekum.am հարթակների միջոցով, ինչպես նաև ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն՝ «114 տեղեկատու» տելեգրամյան հարթակում: